ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/151

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Մասնակից՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.06.2020թ.-ի թիվ /26/8915-2020 գրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 12.06.2020թ. թիվ ՀԲ/16012-2020 գրության հիման վրա, 16.06.2020թ.-ին «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.06.2020թ.-ին:

16.06.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/151 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

23.06.2020թ.-ին, 01.07.2020թ.-ին և 16.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 01.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2020թ.-ին:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 12.06.2020թ. թիվ ՀԲ/16012-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ), որին «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով լրացված ծավալաթերթ-նախահաշիվներում արձանագրվել էին անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

27.05.2020թ.-ին գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին ծանուցվել է անհամապատասխանությունների շտկման մասին: Սահմանված ժամկետում կազմակերպության կողմից ստացվել է անհամապատասխանությունների շտկում, սակայն փաստացի շտկվել են միայն Չափաբաժին 2-ի մասով արձանագրված անհամապատասխանությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ՝ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (գ) ենթակետը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.06.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2020թ.-ի թիվ /26/8915-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատաս-խանություններ, մասնավորապես.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհամայնքային երկու փողոցների 2,1 կմ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների և ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիր Աղբյուր համայնքի 1,65 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ» ծածկագրով Ընթացակարգին Ձեր կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանություններ՝

• 1-ին չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ փողոցի 11-րդ բաժնի /ճանապարհի կահավորում/ ընդհանուր արժեքը ներկայացվել է՝ խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը 3-րդ ենթակետի ա) դրույթը, այն է՝ հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով՝ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում, կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից,

• 1-ին չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 1-ին փողոցի 2-րդ բաժնի /Հողային աշխատանքներ/ ընդհանուր արժեք է նշված 6,630,700 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը 5,332.500 ՀՀ դրամ է:

• 1-ին չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ փողոցի 2-րդ բաժնի /ճանապարհային պատվածք/ ընդհանուր արժեք է նշված 52,754,200 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը /բաժինների արժեքների հանրագումարը/ 52,409.000 ՀՀ դրամ է.

• 2-րդ չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվով և գնային առաջարկով /Հավելված 2/ ընդհանուր արժեք է նշված 220,181,853.50 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը 223,136,439 ՀՀ դրամ է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41–րդ կետը՝ առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկումը»:

Նույն թիվ 2 արձանագրության 6.1 և 9.1 կետերի համաձայն արձանագրվել է հետևյալը, մասնավորապես.

«6.1 կետ - մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է լրացված ծավալաթերթ-նախահաշիվները, սակայն փաստացի շփկվել է միայն Չափաբաժնի 2-ի մասով արձանագրված անհամապատասխանությունները:

9.1 կետ - հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ մերժել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով»:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի՝

«41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատաս-խանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:».

Ընթացակարգի հրավերի 8.10 կետի համաձայն, եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատաս-խանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել՝ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ» ծածկագրով հրատապ բաց

մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատաս-խությունների շտկված տարբերակները /ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է լրացված ծավալաթերթ-նախահաշիվները, սակայն փաստացի շտկվել է միայն Չափաբաժնի 2-ի մասով արձանագրված անհամապատասխանությունները:

Հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը ՍՊԸ-ի հայտը մերժելով այն հիմքով, թե իբր «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկմամբ՝ փաստացի շտկվել է միայն Չափաբաժնի 2-ի մասով արձանագրված անհամապատասխանությունները՝ մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը, ինչը փաստվում է շտկման ծանուցմամբ: Իսկ այն հանգամանքը, որ ՍՊԸ-ի հայտը մերժվել է այդպես էլ արձանագրությամբ չհստակեցնելով մերժման հիմքը, ապա մեր կարծիքով, այդ պատճառը հանդիսանում է ծավալաթերթ-նախահաշիվը ներառող աղյուսակի Excel տարբերակը՝ PDF ֆորմատի փոխադրելու արդյունքում, որը Excel տարբերակով կառավարելի է, իսկ PDF ֆորմատի դեպքում ոչ, այս մասին ավելի հանգամանալից կներկայացնենք նիստի ընթացքում համակարգչի օգնությամբ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք դիտարկել նաև մի շատ կարևոր հանգամանք. արդյոք ՍՊԸ-ի կողմից անհասկանալի պատճառներով հայտը մերժելու հանգամանքով պայմանավորված՝ ՍՊԸ-ին կարող է որակվել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և արդյոք այդ գործողությունը հիմք է՝ մասնակցին Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու համար:

Որպեսզի մասնակցին վերագրվի գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ստանձնած լինի նման պարտավորություն կամ առնվազն այդպիսին որակվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը հստակ և սպառիչ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ մասնակցի կողմից դրսևորած վարքագիծը կարող է դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, դրանք են.

1. հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

2. մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը.

3. ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

Որպեսզի Ընկերությանը վերագրվի գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, անհրաժեշտ էր, որպեսզի առկա լիներ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով նախատեսված որևիցե հիմքերից մեկը:

Փորձենք դիտարկել այդ հիմքերը առանձին-առանձին, բացահայտելով, արդյոք Ընկերության կողմից այդ հիմքերից որևիցե մեկը խախտվել է, թե՝ ոչ:

1.Հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա չի եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Ընթացակարգի հրավերով ամրագրված «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի սահմանափակման որևիցե մի հիմք, ուստի և գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հավասատումը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

2. Մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում որակավորման չափանիշների պահանջներին մասին հայտով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

3. Ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, քանի որ դեռևս «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն դեռևս չի ճանաչվել ընտրված մասնակից և դեռևս գնահատող հանձնաժողովի կողմից չի պահանջվել ներկայացնելու որակավորման ապահովում:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում առկա չի եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցեցրել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոգրյալից՝ մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Մասնակիցը ներկայացրած լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Թիվ ՍՑ-ԼՕ-2020/151 ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ 01.07.2020թ. տեղի ունեցած նիստի քննության ժամանակ բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից հարց բարձրացվեց կապված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ ենթակետով արձանագրված անհամապատաս¬խանության առաջին կետի վերաբերյալ, այն է մասով, թե փաստացի ընդհանուր արժեքը 5,332.500 ՀՀ դրամը, որտեղից է առաջացել:

Ի պատասխան վերը նշված հարցման՝ հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի այն անհամապատասխանությունը, որ 1-ին չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 1-ին փողոցի 2-րդ բաժնի /Հողային աշխատանքներ/ ընդհանուր արժեք է նշված 6,630,700 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը 5,332.500 ՀՀ դրամ է պարբերության փաստացի ընդհանուր արժեքը գնահատող հանձնաժողովը նկատի է ունեցել Հրավերի ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ աղյուսակի 7-րդ սյունակի Ընդհանուր արժեք /տոկոս/ հաշվարկի ընդհանուր արժեքը, որը գնահատող հանձնաժողովը մեկնաբանում է որպես փաստացի:»:

4. <u>ՍՑ-LO-2020/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.05.2020թ.-ին հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

iii. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 1-ին չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ փողոցի 11-րդ բաժնի /ճանապարհի կահավորում/ ընդհանուր արժեքը ներկայացվել է խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը 3-րդ ենթակետի «ա» դրույթը, այն է՝ հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից,
- 1-ին չափաբաժնի մասը լրացված ծավալաթերթ-նախահաշվի 1-ին փողոցի 2-րդ բաժնի /Հողային աշխատանքներ/ ընդհանուր արժեք է նշված 6 630 700 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը 5 332 500 ՀՀ դրամ է:
- 1-ին չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ փողոցի 2-րդ բաժնի /ճանապարհային պատվածք/ ընդհանուր արժեք է նշված է 52 754 200 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը /բաժինների արժեքների հանրագումարը/ 52 409 200 ՀՀ դրամ է:
- 2-րդ չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվով և գնային առաջարկով /Հավելված 2/ ընդհանուր արժեք է նշված 220 181 353.50 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը 223 136 439 ՀՀ դրամ է:

v. Նույն արձանագրության 5.1 և 6.1 կետերի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է լրացված ծավալաթ նախահաշվները, սակայն փաստացի շտկվել է միայն 2-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Արձանագրության 9.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, գնահատել է անբավարար և մերժել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2020թ.-ի թիվ /26/8915-2020 գրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով

նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.05.2020թ.-ին հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի մասով լրացված

ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ փողոցի 11-րդ բաժնի /ճանապարհի կահավորում/ ընդհանուր արժեքը ներկայացվել է խախտելով Կարգի 32-րդ կետը 3-րդ ենթակետի «ա» դրույթը, այն է՝ հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից, լրացված ծավալաթերթ-նախահաշվի 1-ին փողոցի 2-րդ բաժնի /Հողային աշխատանքներ/ ընդհանուր արժեք է նշվել 6 630 700 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը 5 332 500 ՀՀ դրամ է: Ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ փողոցի 2-րդ բաժնի /ճանապարհային պատվածք/ ընդհանուր արժեք է նշվել 52 754 200 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը /բաժինների արժեքների հանրագումարը/ 52 409 200 ՀՀ դրամ է, իսկ 2-րդ չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվով և գնային առաջարկով /Հավելված 2/ ընդհանուր արժեք է նշվել 220 181 353.50 ՀՀ դրամ, սակայն փաստացի ընդհանուր արժեքը 223 136 439 ՀՀ դրամ է::

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է լրացված ծավալաթ նախահաշվները, սակայն փաստացի շտկվել է միայն 2-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, գնահատել է անբավարար և մերժել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում

արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, ներկայացնելով հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2020թ.-ի թիվ /26/8915-2020 գրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/151 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**